Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-1004-05.02.2025-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 108.2-րդ հոդվածում՝

1) Վերնագրում «կալանքը» բառից հետո լրացնել «կամ տնային կալանքը» բառերը.

2) Լրացնել 1.1-ին, 1.2-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Աշխատողի, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու պահից մինչև այն այլ խափանման միջոցով փոխելը կամ վերացնելը աշխատողի լիազորությունները համարվում են կասեցված, եթե դատարանի որոշմամբ բնակության տարածքը չլքելուց բացի կիրառվել են աշխատանքային պարտականությունների կատարման հետ անհամատեղելի սահմանափակումներ: Նշված սահմանափակումները կիրառված չլինելու դեպքում տնային կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում գործատուի և աշխատողի համաձայնությամբ աշխատողի լիազորությունները չեն կասեցվում, եթե աշխատանքի բնույթը թույլ է տալիս այն կատարել հեռավար եղանակով: Այս դեպքում աշխատողի լիազորությունները համարվում են կասեցված մինչև նշված համաձայնության ձեռքբերումը:

1.2. Աշխատողի, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառվելու դեպքում աշխատողի լիազորությունները կասեցվելու կամ չկասեցվելու համար գործատուն հիմք է ընդունում տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին դատարանի որոշման վերաբերյալ քննիչի տրամադրած տեղեկատվությունը:»:

3) Լրացնել նոր 2.1-ին և 2.2-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Տնային կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում աշխատողի աշխատատեղը (պաշտոնը), իսկ աշխատողի լիազորությունները գործատուի և աշխատողի համաձայնությամբ չկասեցվելու դեպքում նաև վարձատրությունը ամբողջությամբ պահպանվում են: Տնային կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում աշխատողի լիազորությունները կասեցված համարվելու դեպքում աշխատողի (բացառությամբ հանրային ծառայության մեջ գտնվող անձի) վարձատրության հարցը որոշվում է կողմերի համաձայնությամբ, իսկ հանրային ծառայության մեջ գտնվող անձի վարձատրությունը չի պահպանվում:

2.2. Տնային կալանքը և պաշտոնավարման կասեցումը աշխատողի նկատմամբ համակցված կիրառվելու դեպքում աշխատողի վարձատրության հարցը որոշվում է կողմերի համաձայնությամբ, իսկ հանրային ծառայության մեջ գտնվող անձի դեպքում վճարվում է միայն սույն օրենսգրքի 108.1-ին

հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձին տրամադրվող ամսական հատուցումը:»:

4) 3-րդ մասում «ժամանակահատվածում» բառից հետո լրացնել «, ինչպես նաև տնային կալանքի տակ գտնվելու այն ժամանակահատվածում, երբ նշված խափանման միջոցի կիրառման ուժով աշխատողի լիազորությունները համարվում են կասեցված,» բառերը.

5) 4-րդ մասում «կալանքը» բառից հետո լրացնել «, կամ տնային կալանքը» բառերը, «կալանքի» բառից հետո՝ «, կամ տնային կալանքի» բառերը.

6) 5-րդ մասում «1-ին և 2-րդ մասերը» բառերը փոխարինել «1-ին, 1.1-ին, 1.2-րդ, 2-րդ, 2.1-ին և 2.2-րդ» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-1004-05.02.2025-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 108.2-րդ հոդվածում՝

1) Վերնագրում «կալանքը» բառից հետո լրացնել «կամ տնային կալանքը» բառերը.

2) Լրացնել 1.1-ին, 1.2-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Աշխատողի, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ տնային

կալանքը որպես խափանման միջոց կիրառելու պահից մինչև այն այլ խափանման միջոցով փոխելը կամ վերացնելը աշխատողի լիազորությունները համարվում են կասեցված, եթե դատարանի որոշմամբ բնակության տարածքը չլքելուց բացի կիրառվել են աշխատանքային պարտականությունների կատարման հետ անհամատեղելի սահմանափակումներ: Նշված սահմանափակումները կիրառված չլինելու դեպքում տնային կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում գործատուի և աշխատողի համաձայնությամբ աշխատողի լիազորությունները չեն կասեցվում, եթե աշխատանքի բնույթը թույլ է տալիս այն կատարել հեռավար եղանակով: Այս դեպքում աշխատողի լիազորությունները համարվում են կասեցված մինչև նշված համաձայնության ձեռքբերումը:

1.2. Աշխատողի, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառվելու դեպքում աշխատողի լիազորությունները կասեցվելու կամ չկասեցվելու համար գործատուն հիմք է ընդունում տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին դատարանի ~~որոշումը~~ որոշման վերաբերյալ քննիչի տրամադրած տեղեկատվությունը:»:

3) Լրացնել նոր 2.1-ին և 2.2-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Տնային կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում աշխատողի աշխատատեղը (պաշտոնը), իսկ աշխատողի լիազորությունները գործատուի և աշխատողի համաձայնությամբ չկասեցվելու դեպքում նաև վարձատրությունը ամբողջությամբ պահպանվում են: Տնային կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում աշխատողի լիազորությունները կասեցված համարվելու դեպքում աշխատողի (բացառությամբ հանրային ծառայության մեջ գտնվող անձի) վարձատրության հարցը որոշվում է կողմերի համաձայնությամբ, իսկ հանրային ծառայության մեջ գտնվող անձի վարձատրությունը չի պահպանվում:

2.2. Տնային կալանքը և պաշտոնավարման կասեցումը աշխատողի նկատմամբ համակցված կիրառվելու դեպքում աշխատողի վարձատրության հարցը որոշվում է կողմերի համաձայնությամբ, իսկ հանրային ծառայության մեջ գտնվող անձի դեպքում վճարվում է միայն սույն օրենսգրքի 108.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձին տրամադրվող ամսական հատուցումը:»:

4) 3-րդ մասում «ժամանակահատվածում» բառից հետո լրացնել «, ինչպես նաև տնային կալանքի տակ գտնվելու այն ժամանակահատվածում, երբ նշված խափանման միջոցի կիրառման ուժով աշխատողի լիազորությունները համարվում են կասեցված,» բառերը.

5) 4-րդ մասում «կալանքը» բառից հետո լրացնել «, կամ տնային կալանքը» բառերը, «կալանքի» բառից հետո՝ «, կամ տնային կալանքի» բառերը.

6) 5-րդ մասում «1-ին և 2-րդ մասերը» բառերը փոխարինել «1-ին, 1.1-ին, 1.2-րդ, 2-րդ, 2.1-ին և 2.2-րդ» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից ~~մեկամսյա~~ մեկ ամիս~~ժամկետում~~ հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1004-05.02.2025-ԱՍ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մաս	«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) Լրացնել (...) 1.2.-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ. «(...) 1.2. Աշխատողի, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառվելու դեպքում աշխատողի լիազորությունները կասեցվելու կամ չկասեցվելու համար գործատուն հիմք է ընդունում տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին դատարանի **որոշման վերաբերյալ քննիչի տրամադրած տեղեկատվությունը**:»: »: Այսինքն, առաջարկվում է Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված տարբերակում առկա *« (...) գործատուն հիմք է ընդունում տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին* ***դատարանի որոշումը:»*** ձևակերպման	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			փոխարեն կիրառել *« (...) գործատուն հիմք է ընդունում տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին* ***դատարանի որոշման վերաբերյալ քննիչի տրամադրած գրավոր տեղեկացումը:»*** ձևակերպումը: Առաջարկը պայմանավորված է նախաքննական գաղտնիքի բացահայտման վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի կողմից հայտնված մտահոգությունները փարատելու անհրաժեշտությամբ, որի արդյունքում որոշումը ուղարկելու փոխարեն նախընտրելի է, որ քննիչը տեղեկատվություն տա գործատուին որոշման մասին:		
2.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից մեկ ամիս հետո:»: Առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջից:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի նոր 10-րդ մաս	«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը լրացվել է նոր «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով՝ հետևյալ խմբագրությամբ՝	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ **Հոդված 1.** 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով. «10. Տնային կալանքը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառելու կամ տնային կալանքի ժամկետը երկարաձգելու մասին որոշման վերաբերյալ քննիչն անհապաղ գրավոր տեղեկացնում է մեղադրյալի աշխատանքի վայրի վարչակազմին՝ նշելով դատարանի որոշմամբ կիրառված սահմանափակումների բնույթն ու ծավալը»: **Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից մեկ ամիս հետո:»: Այս դրույթի լրացման արդյունքում պարզ կդառնա, թե ինչպես է տնային կալանքի տակ գտնվող մեղադրյալի գործատուն իրազեկվելու վերջինիս նկատմամբ տնային կալանք կիրառված լինելու, կիրառված սահմանափակումների բնույթի և ծավալի մասին, ինչպես կալանք խափանման		

			միջոցի դեպքում է, որի առնչությամբ համապատասխան դրույթ է սահմանված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 9-րդ մասում:		